ՍՅՈՒՆԻՔԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ
(Ըստ հնագիտական տվյալների)

ՕՆԻԿ ԽՆԿԻԿՅԱՆ

Ուրարտուի՝ Հին Արևելքի հզորագույն պետություններից մեկի, պատմության քննությանը հսկայական գրականություն է նվիրված: Այդուհանդերձ, չնայած կատարված մեծածավալ աշխատանքների, առկա են ստվերոտ հարցեր, որոնք տարակարծությունների տեղիք են տալիս: Ասվածն առաջին հերթին վերաբերում է այդ զորեղ տերության տրոհման և անկման ժամանակաշրջանին, որը միաժամանակ Երվանդյան արքայատոհմի կողմից ղեկավարվող, հայ ժողովրդի միասնական պետության ստեղծման ու ամրապնդման սկզբնաշրջանը դարձավ: Բեկումնային նշանակություն ունեցած այդ նոր իրավիճակների ձևավորման մեջ հետազոտողներն որոշիչ դերակատարություն են հատկացնում մեդա-կիմմերա-սկյութական գործոններին. դրանք և այլ փաստեր, ըստ անհրաժեշտության, կներկայացվեն ստորև: Այստեղ նշենք միայն, որ սկզբնական շրջանում այդ գործոնները բուռն կերպով զարգացան արևելյան՝ Իրանի հյուսիսարևմտյան տարածքներում, որտեղ բնակություն հաստատած մեդական[1] և այլն ցեղերի կողքին, մոտավորապես կեսդարյա ընդմիջումներով, հայտնվեցին կիմմերական և, ըստ Հերոդոտոսի, նրանց հետապնդող ու Կասպիականի արևմտակողմով տարածաշրջան թափանցած սկյութական ցեղերը և այլն:

Նյութի նույնիսկ նման հպանցիկ անդրադարձից իսկ դժվար չէ նկատել այն կարևորությունը, որ ունեն, եթե ոչ ծավալված իրադարձությունների կենտրոնում, ապա՝ կենտրոնի անմիջական հարևանությամբ գտնվող «Սյունիք-Արցախյան օջախի» (անվանումը մերն է) հնագիտական հետազոտությունների արդյունքները, որոնք, ցավոք, դեռևս ամբողջությամբ բավարար համարվել չեն կարող: Այդուհան-

---

[1] *Հերոդոտոսի համաձայն, մեդական վեց ցեղերն են՝ բոսեր, պարետակեններ, սթրուխաթներ, արիզանթներ, բուտիներ, մագեր: Կարծիքներից մեկի համաձայն դրանք X / IX դդ. տեղաշարժվել են և Բակտրիա–Սոդդից թափանցել Իրանի հյուսիսարևմտյան մասը (տե՛ս* Геродот. История, перевод и примечания Г. А. Стратановского. Л., 1972, с. 44, прим. 82, с. 505*): Հետազոտողներից մյուսների կարծիքով մեդական ցեղերի հիմնական զանգվածը, բացառությամբ արիզանթների և պարետակենների, բնիկներ են եղել, և դա է պատճառը, որ այդ ցեղերի բնակիչների անձնանունները իրաներենով շատ վատ են ստուգաբանվում (*И. М. Дьяконов. История Мидии. М.–Л., 1956, с. 148–149*):*

դերձ, օգնելով գրավոր աղբյուրներում իրենց արտացոլումը չստացած պատմական որոշ մանրամասների վերհանմանը, դրանք թույլ են տալիս նորովի մոտենալ առանձին հարցերի, առաջ քաշել նախնական բնույթի ենթադրություններ: Դրանց վերջնական պատասխանը կտան հետագա պեղումների արդյունքները: Ներկայումս հետազոտվող ժամանակաշրջանի նյութերի գերակշիռ մեծամասնությունը հայտնաբերված է Գորիսի և Կապանի շրջաններից, որոնք և, հարցի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու նպատակով, հակիրճ կներկայացվեն ստորև ըստ մշակութային խմբերի՝ ծառայեցնելով դրանց հետազոտության արդյունքները պատմական իրավիճակների հարստացման նպատակին[2]:

Իրոք, եթե սահմանափակվենք սոսկ գրավոր աղբյուրների տվյալներով, ապա ստիպված կլինենք բավարարվել՝ ասելով, որ ենթադրվում է, թե Գորիս անվանումը ծագել է Գուրիա ձևից, որը հիշատակված է Սարդուր Բ-ի (764–735 թթ.) որդի Ռուսա Ա-ին (735–713 թթ.) պատկանող Ծովինարի արձանագրության մեջ թվարկված, լճի այն կողմի բարձր լեռներում գտնվող և Ռուսայի հետ ճակատած 19 երկրների շարքում[3]. դրանք տեղայնանում են Սևանից արևելք ու հարավ, այսինքն՝ Վարդենիսի, Կրասնոսելսկի, Շամշադինի շրջաններում և Արցախում[4]: Տարածաշրջանի վերաբերյալ առկա տվյալների մեջ կարևոր նշանակություն ունի Սարդուր Բ-ի տարեգրության այն հատվածը, որում ասվում է, թե արքան նվաճել է Ուերդաինի թագավորի թագավորական քաղաք Իրդուան (751/50 թթ.)[5]: Քաղաքի տեղադրությունը երկար ժամանակ անհայտ էր մնում. այն պարզվեց 1975 թ., երբ Սիսիանի շրջանի Արևիս գյուղի մոտ գտնվող Թանահատի վանքի տարածքի մաքրման ժամանակ հայտնաբերվեց Արգիշտի Բ-ի (713–685 թթ.) արձանագրությունը, որով արքան հայտնում է Ծուլուկու երկրի (հայ. Ծղուկ) Իրդուա քաղաքի, նրա թագավոր Զազինուի և Ամուշա քաղաքների մասին: Վերջիններս նույնացվում են միջնադարյան Արիտ կամ Արթեք (այլ կարծիքով՝ Վայոց ձոր գավառի Աւել գյուղի) և Մուցք ավանների հետ[6]:

---

[2] *Նյութերի թվագրությունը և տիպաբանական քննությունը տե՛ս* O. S. Xnkikyan. Syunik During the Bronze and Iron Ages, Burrington, 2002, pp. 77–96.

[3] *Յ. Կարագեոզեան. Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, Երևան, 1998, էջ 135:*

[4] Н. В. Арутюнян. Топонимика Урарту. Ереван, 1985, с. 67.

[5] Г. А. Меликишвили. Урартские клинообразные надписи. М., 1960, с. 275–300.

[6] *Ն. Վ. Հարությունյան. Արգիշտի II նորահայտ սեպագիրը.– ՊԲՀ, 1979,* № *3, էջ 93–104: Արձանագրության մեջ նկատի է առնված ողջ Ծղուկը և, հետևաբար, Սարդուրի ու Արգիշտի Բ-ի արձանագրություններում նշվող Իրդուան կապ չունի Արգիշտի Ա-ի տարեգրության Ուրուրդալիի երկրի նույնանուն Իրդուա քաղաքի հետ. (տե՛ս* Н. В. Арутюнян. Топонимика…, с. 89–90*): Իշպուինի-Մենուային պատկանող Օձասարի արձանագրությունը (Զուլֆայի շրջ.) սպասելի է դարձնում ավելի վաղ թվագրվող արձանագրությունների հայտնաբերումը*

Սյունիքի վերաբերյալ գրավոր այլ տեղեկություններ ներկայումս հայտնի չեն: Այս բացը լրացնելու են գալիս հնագիտական հետազոտությունների արդյունքները: Ցավոք, մեր կողմից մշակութային երեք խմբի բաժանված տեսականին, տարածական և ժամանակագրական առումներով անհամաչափ է ներկայացված, ինչը որոշակի բարդություններ է առաջացնում: Ներկայումս կարելի է ասել, որ անկախ խմբային պատկանելությունից, բացառությամբ առանձին որակ չկազմող դեպքերի, առանձնացված խմբերը հայտնաբերված է հազարամյակներից եկող, տեղական մշակույթին բնորոշ, ուղղանկյուն քարարկղների տեսակին պատկանող դամբարաններից: Դրանք ծածկված են հող ու քարից, երբեմն՝ քարերից կազմված ցածր (սովորաբար՝ 20–40 սմ) դամբարանաթմբերով, որոնք առանձին դեպքերում նույնիսկ դամբարանախցի սալածածկը կազմող սալերը չեն ծածկում: Դամբարանները պարունակում են խմբակային (այս դեպքում՝ ընտանիքի կամ գերդաստանի), երբեմն՝ անհատական թաղումներ, աջ կամ ձախ կողքի պառկեցված, վերջույթները ծալած վիճակով: Ակնհայտ է դիամասնատման՝ կմախքի մասերը, մկանածածկույթից ազատելուց հետո անատոմիական վիճակով թաղելու երևույթը, որը նկատվում է նաև խմբակային թաղում պարունակող առանձին դամբարաններում: Այստեղ թաղումից հետո ոսկորները ծածկվել են հող ու քարով և այդպես հաջորդաբար, որի համար և դամբարանախուցը մասամբ է ծածկվել սալերով կամ բոլորովին չի ծածկվել (օրինակ՝ Խոտ, Հարժիս և այլն): Հանդիպում են և խմբակային թաղում պարունակող դամբարաններ (օրինակ՝ Տանձավեր), որոնց ցածր դամբարանաթմբերի կենտրոնում ժայռակտորներ են տեղադրված. թերևս, դրանք դրվել են այն դեպքում, երբ հաջորդաբար թաղումներ կատարելու անհրաժեշտություն այլևս չի զգացվել (դրանք պայմանականորեն անվանենք «սպառված» կամ «մահացած» ընտանիքներ): Հարկ է նշել, որ նման ժայռակտորներ կան և անհատական թաղումներ պարունակող դամբարանաթմբերի վրա. թերևս, նման դեպքերը պայմանավորված լինեն թաղման ծեսին առնչվող պատկերացումներով: Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ խմբակային թաղումներ պարունակող դամբարանների խեցանոթները հիմնականում դամբարանախուց են նետվել մասնակի վիճակով, նախապես կոտրվելուց հետո, իսկ անհատական թաղումներում նկատելի է դրանք ամբողջական վիճակով դամբարան դնելու ձգտումը:

Առանձին, փոքր խումբ են կազմում Կապանից ոչ հեռու, Կերենի դամբարանադաշտում բացված դամբարաններից մի քանիսը, որոնք թաղման ձևով առանձնանում են նույն դամբարանադաշտի, վերը նկարագրվածներից չտարբերվող մյուս

Սյունիքում: Օձասարի արձանագրության մասին տե՛ս Վ. Ա. Իգումնով, Հ. Հ. Կարագյոզյան, Ս. Գ. Հմայակյան. *Օձասարի սեպագիր արձանագրությունը.– ՊԲՀ, 1997,* № *1, էջ 193–202, Ուերդաինի թագավորի մասին տե՛ս* Н. В. Арутюнян. Корпус урартских клинообразных надписей. Ереван, 2001, с. 324–328, прим. 17.

դամբարաններից: Այսպես, № 73 դամբարանում, որը պատկանում է դամբարանների հիմնահողային տեսակին, կմախքը պառկեցված է եղել մեջքի վրա, ձախ ձեռքը կողքից ձգված և ծնկները ծալած վիճակով. կմախքի մոտ ուղեկցող նյութեր չեն հայտնաբերվել: Այս դամբարանադաշտում բացված են և դիակիզմամբ կատարված կարասային երկու թաղում[7]: Ամյունասափորում կատարված դիակիզման ծեսը օտար չէ ուրարտական մշակույթին: Ինչ վերաբերում է մեջքի պառկեցված, ձեռքը կողքից ձգած և ծնկները ծալած կամ չծալած վիճակով թաղմանը, ապա այն, օտար լինելով մեր տարածաշրջանում, բնորոշ է հարավռուսական տափաստանների և անտառատափաստանային լայն գոտու տարածքների բնակչությանը դեռևս էնեոլիթի դարաշրջանից («հնափոսային» և «միջին ստոգովյան» մշակույթներ)[8]. շարժման մեջ գտնվող անասնապահների այդ խմբերը հաճախ են հայտնվել նաև հյուսիսարևելյան Կովկասի տարածքներում, որի վկայությունն են այդ տարածքներում բացված վաղ բրոնզեդարյան դամբարանները: Դրանցից հայտնաբերված նյութերը հյուսիսից և հարավից եկող ուժեղ ազդեցություն են դրսևորում[9]: Նույնը կարելի է ասել և Կենտրոնական Կովկասի II հազ. թվագրվող դամբարանադաշտերի վերաբերյալ[10]: Թաղման այդ դիրքը այլ ձևերի ու այլատեսակ դամբարանների հետ սովորական է և Միջին Ասիայի բրոնզ-երկաթեդարյան հուշարձաններում: Էական է այն հանգամանքը, որ նշված տեսակների տարածման սահմանները կայուն չեն, ինչը զգալիորեն պայմանավորված է եղել տեղաշարժերով: Հետազոտողները համամիտ են, որ Միջին Ասիայի թե՛ հարավի հողագործների, և թե՛ հյուսիսի խաշնարածների մոտ տեղի ունեցած այդ բարդ գործընթացների հիմքում գտնվող պատճառների շարքում ամենևին էլ երկրորդական նշանակություն չեն ունեցել կլիմայական փոփոխությունները, հողի աղքատացումն ու աղայնացումը, որոնք խթանել են բնակչության տեղաշարժերը, քոչվոր անասնապահական տնտեսության զարգացումը և այլն[11]: Եվրասիական ընդարձակ տարածքներին բնորոշ թաղման նշված տեսակը Այսրկովկասում երևան է գալիս կիմմերա-սկյութական արշավանքների ընթացքում. դա համահունչ է Հերոդոտոսի շարադրանքում ներկայացված տվյալներին, որոնց լրացնելու եկան հնագիտական պեղումներից ստացված արդյունքները[12]: Այդուհանդերձ, այս օտարամուտ երևույթները մեր տարա-

---

[7] А. Г н у н и. Новонайденный могильник в предгорьях Сюника.– Археология, этнология, фольклористика Кавказа (այսուհետև՝ АЭФК). Тбилиси, 2011, с. 87–93.

[8] Энеолит СССР.– Археология СССР, т. IV. М., 1982, с. 324, 328.

[9] Р. М. М у н ч а е в. Древнейшая культура Северо-Восточного Кавказа. М., 1961, с. 132–146.

[10] Б. В. Т е х о в. Центральный Кавказ в XVI–X вв. до н. э. М., 1977, с. 14–16.

[11] Древнейшие государства Кавказа и Средней Азии.– Археология СССР, т. VIII, М., 1985, с. 178–197, 201, 264–265.

[12] Г е р о д о т. Указ. раб., с. 45, 190, 204–205.

ծաշրջանում որակ չեն կազմում. հիմնականը տեղականն է, ինչը հստակ է դիտվում և հայտնաբերված նյութերի քննության ընթացքում:

Առաջին խմբում *ներառված նյութերի բնորոշ գիծը՝ վաղ երկաթի դարաշրջանից եկող հատկանիշների կամ դրանց զարգացում հանդիսացող տարրերի առկայությունն է: Այս խմբում են ցողունաձև պոչուկով ու դափնետերև տեսք ունեցող սլաքով երկաթյա նետասլաքները, փետրաձև սայրով երկաթյա խողովակակոթառ նիզակները, ուղիղ շեղբի ձևով բրոնզյա նմուշներին կրկնող, երկաթից պատրաստված դանակները. դրանցից մեկի հարթ կոթունի վրա բրոնզե գլանաձև գոտեկապ կա ներդիրները ամրացնելու համար: Նյութերի այս խմբում են և միաձույլ՝ կոնաձև գլխիկով երկաթյա դաշույնը, ինչպես և նախկին ձևերն անփոփոխ պահպանած այնպիսի բրոնզյա զարդեր ու այլնայլ իրեր, ինչպիսիք են՝ ասեղները, բրոնզաձույլ թռչնաձև կախիկները, պարզ ապարանջաններն ու օղերը, շաղախից, սարդիոնից, բրոնզե թիթեղներից պատրաստված տարատեսակ ուլունքները (տակառաձև, կոնաձև, դոմինոյաձև, գնդաձև և այլն), սրոցաքարերը և այլն: Նախկինից եկող ավանդույթների հետ ունեցած սերտ կապն են դրսևորում և տարատեսակ խեցանոթները, որոնց շարքում հիմնականը՝ սև, գորշ, շագանակագույն, խամրած կամ թեթևակի փայլեցրած մակերեսով սափորներն ու քրեղաններն են:*

Սափորները լայնահատակ, գնդաձև իրանով, փոդաձև լայնացող կամ գլանաձև վզով անոթներ են. դրանց կանթերը, ինչպես և վերոնշյալ դարաշրջանում՝ ծնկաձև ոճավորված, աղեղնաձև տեսք ունեն: Կանթերի վերին՝ շրթի հետ միացման հատվածում, հաճախ են հանդիպում պարուրաձև ելունդազարդեր, որոնց նախաձևը (ամբողջությամբ չձևավորված պարույր-ելուստ) եզակի օրինակներով (Անգեղակոթ, Առաջաձոր, Գետաբեկ և այլն) տեսնում ենք II / I հազարամյակի համալիրներում: Դրանց շարքում առկա են և իրանին ամրացված օղակաձև բռնակներ (տե՛ս առաջին խմբի վերին շարքի նյութերի նկարները), որոնք սովորական են հետագոտվող դարարջանի (VII–VI դդ.) համալիրներում: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Հարժիսի - 3 դամբարանից հայտնաբերված, թեթևակի ձգված իրան, գլանաձև՝ դեպի վեր փոքր-ինչ լայնացող վզով երկկանթ գավաթը: Վերջինիս ծնկաձև ձևավորված տեսքով կանթերը շրթին միացման հատվածում, զարդարված են պարուրաձև ելունդազարդերով, իսկ իրանը՝ կետերով լցված փորագիր եռանկյունիների երեք շարքով: Անոթի այս ձևը նման է ուրարտական շրջանի նմուշներին[13], որոնք չնայած առանձին մանրամասներով տարբերվում են, բայց ձևով այն տեսակն են ներկայացնում, որը պատկերված է Պերսեպոլիսում՝ Քսերքսեսի պալատի պատին պատկերված հայ պատվիրակների ձեռքերում[14]:

---

[13] *Հ. Գ. Ավետիսյան, Պ. Ա. Ավետիսյան. Արարատյան դաշտի մշակույթը մ. թ. ա. XI–VI դդ., Երևան, 2006, աղ. 157–159:*

[14] А. А. Мартиросян. Город Тейшебаини. Ереван, 1961, с. 139–141, рис. 63.

Տարբեր դարաշրջանների նյութերի միջև կապը դիտվում է և զարդանախշերի քննության ընթացքում: Դրանք փորագրմամբ կամ սեղմմամբ ստացված ուղիղ կամ թեք գծեր են, սակավ՝ բեկյալներ, որոնք երբեմն ստացված են սանրատամ եղանակով. կան և կոկմամբ արված ցանցապատկերներ, իսկ երկու օրինակ կամարաձև զարդ ունեն: Դրանցից մեկը ստացված է սեղմմամբ, մյուսը՝ նուրբ կավերիզ կպցնելու եղանակով: Զարդը հիշեցնում է Հայաստանի այլ շրջաններում հաճախ հանդիպող, բայց փայլեցմամբ ստացվածը: Այս տեսակետից հետաքրքիր է կանթերից մեկը. վերջինիս կենտրոնով տարված ընդերկայնական ակոսագծերը, թերևս, - կարող են դիտվել իբրև ժամանակաշրջանին բնորոշ և Հայաստանի այլ վայրերում հաճախ հանդիպող ընդերկայնական փորվածքի ձևափոխված մանրամասն, որն այս դեպքում լրացված է տարածքին բնորոշ, ոճավորված կենդանագլուխ նմանակող շրջաններով: Նման մանրամասների առկայությունը կամ բացակայությունը (այդ թվում են և կոճակաձև ու պարուրաձև ելունդազարդերը. վերջիններիս զուգահեռները հյուսիսում հայտնի են Գետաբեկ-Կալաքենդի դամբարաններից գտնված խեցանոթների կանթերին)[15] խոսում է կայացած տեղական օջախների մասին: Սյունիքին բնորոշ են և կլորացող իրան ու ներս հակվող շուրթ ունեցող քրեղանները, որոնց մակերեսի գույնը նույնն է ինչ և սափորներինը (Հարժիս, Խնածախ, Տանձավեր և այլն): Այս խեցանոթների մեծ մասը իրանի վերին հատվածում՝ անմիջապես շրթի մոտ, ուղղահայաց տեղադրված օղակաձև բռնակ ունի: Ինչ վերաբերում է զարդերին, ապա դրանք հիմնականում ամանների վերին մասը գոտևորող ակոսներ են, երբեմն՝ դրանց մեջ ներառնված հատիկներով, ցանցապատկերներով կամ բեկյալ գծապատկերների ուղեկցությամբ: Մ. թ. ա. IX–VIII դդ. նյութերի շարքում իրենց զուգահեռներն ունեցող (Եղեգնաձոր, Սիսիան, Տեղ և այլն) այս քրեղաններից առանձնանում է Հարժիսից հայտնաբերվածը. այն իրանի վերին մասում կտրուկ անցումներ ձևավորող կողերի տեսքով նման է նախորդ դարաշրջանի նմուշներին, բայց դրանցից տարբերվում է հորիզոնական, փոքր-ինչ վեր թեքված հարթ բռնակով, որը սովորական լինելով Հայաստանի մյուս շրջաններում, Սյունիքում սակավ է հանդիպում: Ինչ վերաբերում է խեցանոթների մյուս տեսակներին, ինչպիսիք են, օրինակ, միականթ և անականթ, հատիկազարդ, կետազարդ և ակոսազարդ խոհանոցային կճուճները, ծորակավոր անոթները և այլն, ապա դրանց ձևերն ու զարդերն առանձնապես փոփոխություններ չեն կրել:

[15] А. А. И в а н о в с к и й. По Закавказью.– Материалы по археологии Кавказа (*այսուհետև* ՝МАК), т. VI. М., 1911 (*տե՛ս դամբ. նաև Առաջաձոր, օր.* ՝№ *55, 60, 91, աղ. X17, XI24) և այլն:*



I խումբ - Նկ.նկ. 1. Ջրաբաղրեր, 2. Տեղ, 3. Սիսիան, 4. Եղեգիսաձոր, 5-7, 12-18. Հարժիս, 8, 10. Տանձավեր, 9, 11, 19. Խնասնակ

II խումբ - Նկ. նկ. 1. Մեղրի, 2. Թառեր, 3. Հարժիս, 4. Եղեգիսաձոր, 5, 6, 8, 9, 15. Շիկահող, 7. 10, 16. Տանձավեր, 11. Խնասնակ, 12-14. Խոտ

III խումբ * նկ. նկ. 1. Խնասնակ, 2. Հարժիս, 3. Եղեգիսաձոր, 4-9. Շիկահող

Ելնելով առաջին՝ նյութերի հիմնական խումբը կազմող տեսականու քննության արդյունքներից, տպավորություն է ստացվում, որ չնայած Սյունիքն ընդգրկված է եղել ուրարտական տերության կազմում, այդուհանդերձ, բնակչության առօրյա կյանքում, առանձնապես խոր, էական նշանակություն ունեցած փոփոխություններ չեն կատարվել: Հայտնաբերված նյութերը նախորդ դարաշրջանի հետ սերտ կապ են ցույց տալիս: Նման իրողությունը, այլ դեպքում, թերևս, կարելի կլիներ հիմնավորել կյանքի ներփակ, առանձնացած բնույթով, որը սխալ է: Դրա ապացույցը երկրորդ խմբի՝ «ուրարտական և մեկտեղված» բնույթ ունեցող նյութերի քննության արդյունքներն են:

Երկրորդ խումբ: *Համադրելով գրավոր աղբյուրների տվյալների հետ՝ այս նյութերի քննությունը մեծապես հարստացնում է պատմական իրավիճակի վերաբերյալ ունեցած գիտելիքները: Իրոք, եթե փորձենք առաջնորդվել սոսկ Եղեգնաձորի՝ երևելի ուրարտացի զինվորականին պատկանող դամբարանից ու Կապանից ոչ հեռու գտնվող Սգնակ գյուղից գտնված, ուրարտական արվեստի հիասքանչ նմուշ հանդիսացող, բրոնզաձույլ առյուծի գյուտերով, ապա կարող ենք միայն ասել, որ ուրարտական զինուժը հասել է Կապան. Արգիշտի Բ-ի արձանագրությունը չի հակասում ասվածին: Սակայն իրական պատկերը այլ է. այդ են ապացուցում պեղումների արդյունքները:*

Չծանրանալով ուրարտական արտադրանքի նկարագրության ու զուգահեռների թվարկման վրա՝ նշենք միայն, որ Կապանից, ինչպես նաև Եղեգնաձորի ու Մալիշկայի առաջնակարգ նմուշներից բացի (ծիսական և աշխարհիկ պատկերներով զարդարված գոտիներ, կոթունի հիմքում խնձորակ ունեցող երկաթյա նետ, շրջանաձև աշխատաբերան ու կեռացած կոթով երկաթյա «տաշտաքերիկ», բրոնզյա դույլ, ցլապատկերով թաս, եռոտանի աշտանակ և այլն), ներկայումս հայտնի են և այլ տեսակներ: Մասնավորապես, Հարժիսից և Շիկահողից հայտնաբերված են բրոնզյա պատյաններ (թերի և ամբողջական), որոնցից մեկի մեջ երկաթյա դաշույնն է պահպանված, իսկ Բռունից գտնված է ձիու դիմակալի բրոնզե բեկոր: Նյութերի այս շարքը լրացնում են Մեղրիից և Շիկահողից գտնված, կենտրոնում կոնաձև ելուստ ունեցող, բրոնզյա խոշոր վահանիկները, Տանձավերից ու Հարժիսից հայտնաբերված երկաթյա մանգաղաձև դանակները, օձագլուխ՝ զանգվածեղ ծայրերով ապարանջանները, զանգակաձև կախիկները (Շիկահող):

Կարևոր նշանակություն ունեն և խեցեղենի առանձին տեսակներ: Առաջին հերթին նկատի ունենք Հարժիսից, Տանձավերից և Շիկահողից հայտնաբերված, ծիսական նշանակության սկահակները, որոնք ունեն ձվածիր կամ գնդաձև իրան, դուրս թեքված կարճ կամ փողաձև լայնացող երկար վիզ, ոտքաձև ելուստով կամ սկավառակաձև նստուկով ավարտվող ոտիկ: Իրանները զարդարված են ցանցապատկերներով, եռանկյունիներով, արևապատկերներով, իսկ առանձին նմուշներ՝ խո-

յագլուխ ելունդներով. կան և անզարդ օրինակներ: Նման ծիսանոթներ, այդ թվում՝ իրանի վրա հանվածք ունեցող բուրանոթներ, հայտնի են Էրեբունիից, Արգիշտիխինիլիից, Թեյշեբաինիից, Օշականից և այլ ուրարտական հուշարձաններից[16]:

Մեկտեղված տեսք ունեցող նմուշներից է երկկանթ, փոքրիկ, սափորաձև անոթը, որը նման է վերը հիշատակված, Քսերքսեսի պալատի պատկերների օրինակներին: Այս անոթի տեղական արտադրանք լինելը վեր է կասկածից. կանթերի ձևավոր տեսքը և ելուստների առկայությունն, այդ են վկայում: Ուրարտական մշակույթի բնորոշ նյութերին են նմանակում և Բռունից, Խնածախից, Խոտից, Տանձավերից և Շիկահողից հայտնաբերված կոնք-տաշտակներն ու թասփիալաները: Չափերով տարբերվող այս ամանների մի մասը վերին հատվածում ունի թեթևակի գոգավոր և սահուն անցումով դուրս թեքվող շրթին միացող, փոքր-ինչ կլորացող իրան: Առանձնանանում են Խոտից հայտնաբերված երկու նմուշ: Դրանցից մեկի վերին մասի գոգավոր հատվածն իրանից բաժանվում է ընդգծված անցումով, ուր և ուղղահայաց, սեգմենտաձև ելուստ-բռնակ է ամրացված, իսկ մյուս օրինակն ունի կիսագնդաձև իրան, որն ավարտվում է գոգավոր հատակով. դա բնորոշ է համանման ուրարտական նմուշներին: Սև խամրած մակերես ունեցող այս թասի օղակաձև կանթը կոտրված է: Սև ու գորշ, անփայլ, խամրած մակերես ունեն և մյուս նմուշները. բացառություն են կազմում Բռունից, Տանձավերից ու Շիկահողից մեկական օրինակով ներկայացվածները, որոնք աղյուսագույն ու դեղնակարմրավուն են:

Տարբեր ոճերի մեկտեղում է դիտվում և Տանձավերից հայտնաբերված կճուճի ձևերում. այն ունի փոքր-ինչ ձգված և սեղմված տեսքով իրան, դուրս թեքվող կարճ վիզ ու երեքնուկաձև շրթից սկսվող և ուսին միացող աղեղնաձև կանթ: Անոթի իրանի ձևը սովորական է տեղական մշակույթի խոհանոցային նշանակության կճուճների համար, բայց շրթի երեքնուկաձև տեսքը ուրարտական մշակույթի, պետական արհեստավորների կողմից զանգվածաբար արտադրվող գեղեցիկ սափորների բնորոշ գծերից է, որը Սյունիքի տվյալ ժամանակաշրջանի հուշարձաններում, բավական կոպիտ պատճենում հանդիսացող ձևով, առաջին անգամ է հանդիպում: Հատկանշական է, որ այդ սափորներից և, ընդհանրապես, ուրարտական էլիտար մշակույթին պատկանող խեցեղեն արտադրանքի նուրբ ձևերը Սյունիքարցախյան օջախում, դեռևս անհայտ են:

Երկրորդ խմբի տեսականու քննության արդյունքները ցույց են տալիս, որ ուրարտական մշակույթի ուժեղ ազդեցություն կրող նյութերը տարածված են ողջ Սյունիքում և դրա առանձին տեսակներ (թաս-փիալաներ և կոնք-տաշտակներ) լայնորեն օգտագործվել են բնակչության կողմից: Նման փոփոխությունները հա-

---

[16] *Հ. Գ. Ավետիսյան, Պ. Մ. Ավետիսյան. նշվ. աշխ., աղ. 118, 119, 161, 148$_{3,4}$ և այլն:*

զիվ թե կարող էին իրագործվել ուրարտական զինուժի կարճատև ու արագընթաց արշավների պայմաններում. դրանք բնակչության տարբեր խմբերի տնական շփումների, միախառնումների արդյունքում երևան եկած և ուրույն գծեր դրսևորող նոր ձևեր են: Կայսրությունում, որի բնակչության գերակշիռ մեծամասնությունը այլ տարրեր էին կազմում, հարկադրում էր արքաներին լայնածավալ տարեգրումներ իրագործել տերությունն ու նրա սահմաններն ամեն կերպ ամրապնդելու նպատակով[17]*: Տերության հյուսիսարևելյան տարածքները բացառություն չէին, ավելին, տարբեր առումներով դրանք առաջնային նշանակություն էին ձեռք բերել: Իրոք, Սարգոն Բ-ն (722/21–705 թթ.) վկայում է, թե Ռուսան դավեր նյութելով, Մաննայի «փոխարքաներից» կամ կառավարիչներից մեկի՝ Դայուկկուի մոտ (նույնացվում է Հերոդոտոսի Դեյոկի և Խորենացու՝ Դեովկիսի հետ) չարախոսել է իր հովանավորյալ, Մաննայի թագավոր Ուլլուսունային: Հեռացնելով նրան գահից, Ռուսան վերցնում է Մաննային պատկանող 22 ամրոց: Սարգոնը հայտարարում է, թե Ուլլուսունայի խնդրանքով ինքը դրանք ազատագրել և Ուլլուսունային է վերադարձրել, իսկ բնակչությանը վերաբնակեցրել է Ասորեստանում: Ինչ վերաբերում է Դայուկկուին, ապա նա ընտանիքով հանդերձ (նրա որդին Ռուսայի մոտ էր) 715 թ. Սիրիա է աքսորվում*[18]*: Ռուսան, ինչպես հայտնի է, կիմմերների հարձակման պատճառով, չկարողացավ օգնել իր դաշնակցին. ավելին՝ նա պարտվեց այդ պատերազմում: Ամենայն հավանականությամբ, այս ժամանակին է պատկանում լրտեսական բնույթի այն տեղեկությունը (Արադ-Սին), որում հայտնվում է, թե «կիմմերացին դուրս է եկել մաննեացիների երկրից և մտել Ուրարտու»*[19]*: Չծանրանալով կիմմերա-ուրարտական պատերազմից օգտված Սարգոնի արշավի և 713 թ. Ռուսայի կրած պարտության մանրամասների վրա՝ նշենք միայն, որ Ռուսան, հնարավոր է, կարճ ժամանակով վերցված այդ ամրոցներից և շրջակա տարածքներից, իր հերթին, բնակչության որոշ խմբեր վերաբնակեցրած լիներ. նույնը կարող էր կատարել և Արգիշտի Բ-ն: Ծայր արևելքում՝ Ռազլիկից և Նաշտեբանից (Արդաբիլից հարավ-արևմուտք և Ուրմիայից ու Սարաբից արևելք) հայտնաբերված այս արքայի արձանագրությունները, որոնք վկայում են Ռուսա Ա-ի կորցրած տարածքները ետ բերելու, Մաննային թուլացնելու և այլ դեպքերի մասին, գրեթե միանման բովանդակություն ունեն. հայտնվում է Գիրդունի, Գիտուխունի, Տուիշ-*

---

[17] *Մանրամասները տե՛ս Ա. Պետրոսյան. Ուրարտուի իշխող տարրի ծագման շուրջ.– Հին Հայաստանի մշակույթը, հ. XIII, Երևան, 2005, էջ 139–144:*

[18] И. М. Дьяконов. Ассиро-Вавилонские источники по истории Урарту (*այսուհետև՝* АВИУ).– «Вестник Древней истории» (այսուհետև՝ ВДИ), 1951, № 2, с. 317–318, 324–326. *Դայուկկուն Մաննային միացած նորաստեղծ թագավորություններից մեկի՝ Մեդիայի թագավորն էր, որը ենթակա էր Մաննայի թագավոր Ուլլուսունային:*

[19] АВИУ, ВДИ, 1951, № 2, с. 339–340.

դունի և այլ երկրների նվաճման, Արգիշտեհիրդու քաղաքի (վերա)կառուցման մասին[20]*: Ճիշտ է, արձանագրություններում բնակչության վերաբնակեցման մասին խոսք չկա, բայց որ Արգիշտի Բ-ն իրագործել է դրանք, կարծում ենք, հաստատվում է ոչ միայն այլ արձանագրությունների տվյալներով, այլև վերջին խմբում դասված հնագիտական նյութերով:*

Երրորդ խումբ: *Պայմանականորեն նույն խմբում դասված այս նյութերը, պատկանելով տարբեր մշակույթների, բավական բարդ պատմական իրավիճակ են ուրվագծում: Այստեղ դասված նյութերի գերակշիռ մեծամասնությունը մերձակցություն է ցուցաբերում Թալիշի և Իրանի հյուսիսարևմտյան շրջանների հուշարձաններից հայտնաբերված նյութերին: Այս տեսակետից առանձնանում են հատկապես կենդանակերպ ծիսանոթները, որոնց մեծ մասը ձի է հիշեցնում. միայն մեկ օրինակ եղջերվի տեսք ունի: Նման անոթներ հյուսիսում, ներկայումս հայտնի են Թբիլիսիից (Թրելիի դամբարանադաշտ): Ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ նշված ընդարձակ տարածքի շրջաններից և ոչ մեկում, ոչ միայն այսօրինակ ծիսանոթների նման առատություն չի դիտվում, այլև եղած սակավաթիվ նմուշներն էլ հիմնականում թռչնակերպ են: Բացառություն են կազմում Թրելիի երկու, անտարակույս, ցեղային առաջնորդների այրված աճյուններ պարունակող, խոշոր սրահների տեսքով (70 մ² և 42 մ², բարձր 4մ) դամբարանախցերից (VIII դ. վերջ – VII դ.) հայտնաբերվածները: Ուշագրավն այն է, որ այստեղ ոչ թե դիակիզում է կատարվել, այլ դիակներն այրվել են դամբարանախցերի պատերը ծածկող գերանաշեն կառույցները վառելու ընթացքում. առկա են և այլ մանրամասներ, որոնք բնորոշ են սկյութական թագավորական թաղումներին, որոնք հայտնի են հյուսիսմերձսևծովյան տարածքներում (Նալչիկ և այլն)*[21]*:*

Թրելիում գտնված նմուշներից մեկը ձիակերպ է, մյուսը ցլի, իսկ երրորդը խոյի տեսք ունի[22]*: Անոթների այս տեսակը Հայաստանում և Կովկասի այլ վայրերում հանկարծակի, վերջնականապես ձևավորված ու կատարյալ տեսքով է երևան գալիս, առանց նախորդ դարաշրջանում նախաձև ունենալու*[23]*: Համոզիչ է այն կարծիքը, որ Այսրկովկասում դրանք կարող էին հայտնվել իրենց ծեսերում նման ծիսանոթներ գործածող, այլ վայրերից եկած մարդկանց միջոցով: Այդ տարածքները,*

---

[20] Н. В. А р у т ю н я н. Корпус урартских …, с. 321–322.

[21] *Մանրամասները տե՛ս* Степи европейской части СССР в скифо-сарматское время.– Археология СССР, т. X, 1989, с. 53–64, 219.

[22] Р. М. А б р а м и ш в и л и. Археологические исследования на новостройках Большого Тбилиси.– Археологические исследования на новостройках Грузинской ССР. Тбилиси, 1976, с. 27–28, табл. IX–X.

[23] *Ցլագլուխ տեսք ունի և Գերաբեկ-Կալաքենդի № 66 դամբարանից գտնվածը, որն այլ տեսակ է ներկայացնում (տե՛ս* А. А. И в а н о в с к и й. *Նշվ. աշխ., էջ 134–136): Վերջինիս կիրառությունը այլ է եղել:*

դատելով ավելի վաղ թվագրություն ունեցող համանման անոթների հաճախակի հայտնաբերվելու հանգամանքից, կարող էին Թալիշն ու Իրանի հյուսիսային և հյուսիսարևմտյան շրջանները լինել[24]: Նշված տարածքներում նման ծիսանոթներ, չնայած տարածաշրջանի անբավարար հետազոտված լինելուն, հայտնի են Խուրվինից, Կալար-դաշտից, Ռազգուրից, Ջոնյուից[25]: Այդպիսիները, բայց ավելի կատարյալ ու իրական տեսքով (ձի և քարայծ) առկա են նաև Ֆորուգի՝ IX դ. թվագրվող հավաքածուի մեջ. այդտեղ տեսնում ենք նաև կենդանագլուխ (խո՞յ) հավելվածով կանթ ունեցող, տանձաձև իրանով սափոր[26]: Ուշադրություն է գրավում կանթի կենտրոնական մասում խիստ ոճավորված, խոյագլուխ ելունդազարդ ունեցող անոթների առատությունը Կապանի շրջանի (հատկապես Բարգուշատի լեռնաշղթայից հարավ) հուշարձաններում (Տանձավեր, Շիկահող, Գեղանուշ), այն դեպքում, երբ այդտեղ կանթի վերին մասի պարուրաձև զարդը, անհայտ լինելով, բնորոշ է Սիսիան-Գորիսի շրջանների հուշարձաններից (Անգեղակոթ, Սիսիան, Հարժիս, Խնածախ, Խոտ) գտնված դեռևս X–VIII դդ. թվագրվող խեցանոթների վրա: Դժվար է անտեսել և Կապանի շրջանի հարավային մասի խեցանոթների մակերեսի դեղնակարմրավուն կամ կարմրավուն, երբեմն՝ կարմրավարդագույն ու աղյուսագույն երանգի գերակշռությունը, չնայած խեցեղենի ձևերը (գնդաձև իրանով լայնահատակ սափորներ, նույն աղեղնաձև կամ օղակաձև կանթով, կլորացող իրան և ներս հակված շուրթ ունեցող քրեղաններ և այլն) ցույց են տալիս դրանց տեղական արտադրանք լինելը: Հնարավոր է այս առանձնահատկությունները, թերևս, պայմանավորված լինեն նաև տարբեր ավանդույթների մեկտեղմամբ ու այս տեսակետից հազիվ թե անտեսվի ծիսանոթների զարդերում տեղական ձևերի լայն օգտագործումը (կոկմամբ ստացված ցանցեր, գծեր, դրոշմաշրջաններ և այլն), բայց միաժամանակ և ուշադրություն է գրավում կարմրադեղնավուն մակերեսով խեցեղենի (դրանք հիմնականում գտնված են անհատական թաղումներ պարունակող դամբարաններից) զարդերի սանրատամ կամ խազելու եղանակով ստացված բազմաշար բեկյալ կամ անկյունաձև պատկերների բնորոշ լինելը. սև մակերես ունեցողների վրա դրանք ավելի բազմատեսակ են ու հարուստ: Ինչո՞վ են պայմանավորված այս առանձնահատկությունները. ներկայումս դժվար է միանշանակ պատասխանել (ազդեցություններ, ներթափանցումներ, ժամանակագրական փոքր տարբերություններ և այլն). այս և այլ հարցերի պատասխանները կտան Սյունիքի ու

[24] М. Н. П о г р е б о в а. К вопросу о связях Восточного Закавказья и Ирана в конце II – нач. I тыс.– История Иранского государства и культуры. М., 1971, с. 95–98.

[25] L. V a n d e n B e r g h e. Archeologie de l'Iran Ancien, t. III, Leiden, 1959, p. 154, 155: J. de M o r g a n. Mission Scientifique en Perse, t. IV, Paris, 1896, fig. 123, 124.

[26] «Курьер», М., октябрь, 1971, с. 10–24.

հարևան տարածքների հուշարձանների հետագա պեղումները[27]: Առկա տվյալները թույլ են տալիս այս կամ այն չափով հստակեցնել Սյունիքում ստեղծված իրավիճակը Արգիշտի Բ-ի, Ռուսա Բ-ի, թերևս, Սարդուր Գ-ի գահակալության տարիներին: Այս տեսակետից առանձին կարևորություն են ներկայացնում պայմանականորեն այս խմբում դասված նյութերից վերջինները, որոնք են ապարանջաններն ու նետասլաքները:

Խնդրո առարկա ապարանջանը գտնվեց Խնածախ գյուղի, ամբողջությամբ քարերով լցված (հողը շատ քիչ էր) և ծածկասալերից զուրկ, բավական խոշոր չափերի (5 x 4 x 2,7 մ) քարարկղից: Քարերի միջև գտնվեցին տարբեր բրոնզե իրեր, նախապես կոտրվելուց հետո մասնակի վիճակով դամբարան նետված տարատեսակ խեցանոթներ, գանգի փշրված ոսկորներ ու թևի երկու ոսկոր, որոնցից մեկի վրա արծաթե երկու ապարանջան էին հագցված: Հետաքրքիր էր դրանցից մեկը, որը ողկույզաձև երեք հավելվածների տեսքով հիշեցնում է ուշ ասորեստանյան (VII դ.) բարձրաքանդակների կանանց ականջօղերը[28]: Նման զարդեր Այսրկովկասում ներկայումս հայտնի են Ջրառատից[29], իսկ վաղ աքեմենյան դարաշրջանում դրանք ավելի կատարյալ և նուրբ տեսք են ընդունում (Վանի, Քվիրիլի, Բեշտաշեն և այլն)[30]: Ամենայն հավանականությամբ, այս զարդը Սյունիքում հայտնվել է կամ Ասարխադդոնի (680–669 թթ.) և Աշուրբանապալի (669–633 թթ.) գահակալության ժամանակ Ուրարտու-Ասորեստան «ջերմացած» հարաբերությունների արդյունքում, կամ կարող էր բերված լինել շարժունակ կենսակերպ ունեցող սկյութների կողմից. գրավոր աղբյուրների տվյալները և հնագիտական նյութերը չեն հակասում նման ենթադրությանը:

---

[27] *Առաջին հերթին կարևորվում է Արաքսի միջին հոսանք – Ուրմիա լիճն ընկած հուշարձանների մշակույթը. դրա առանձնահատկությունները կարող են շատ հարցերի պատասխանել: Այն կօգնի Սյունիք–Արցախի հարավային սահմանների հստակեցմանը. օրինակ՝ Ուրարտուի սահմաններում ներառված Սանգիբուտուն, արևելակողմից նրան հարող կադուսիների կամ կադիշների և հարևան այլ շրջանների մշակույթը: Թվում է, թե հարավային տարածքների հետ այսօրինակ խեցանոթների ունեցած կապի մասին են խոսում Շամքորի շրջանի Բարսում (Տիգրանակերտ) գյուղից հայտնաբերվածները. դրանցից մեկի կանթը խոյագլուխ զարդ, իսկ մյուսը՝ ժամանակաշրջանին բնորոշ ընդերկայնական ճեղք ունի: Այս նյութերն առանձնանում են տարածքին բնորոշ սև մակերես ունեցող խեցանոթներից:*

[28] Г. А. Т и р а ц я н. Некоторые черты материальной культуры Армении и Закавказья V–IV вв. до н.э.– «Советская археология» (*այսուհետև՝* СА), 1964, № 3, с. 66, рис. 2-3.

[29] *Ի. Ա. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. Հայաստանի նյութական մշակույթը մ. թ. ա. VI–IV դդ., Երևան, 2003, աղ. 48, նկ. 20:*

[30] Б. А. К у ф т и н. Археологические раскопки в Триалети. Тбилиси, 1941, § 5. *Այդ զարդերի ճառագայթաձև հավելվածները շատ ավելի նուրբ են. դրանց հետ գտնված են «սկյութական» նետասլաքներ, այլ նյութեր:*

Ասվածի ապացույց կարող են հանդիսանալ նյութերից վերջին երկուսը, որոնք Եղեգնաձորից ու Հարժիսից հայտնաբերված «սկյութական» կոչված նետասլաքներն են[31]*: Վերջիններս բրոնզյա եռաթև սլաքներ են, որոնց խողովակաձև կոթառները մի դեպքում ձվածիր, մյուսում՝ ձգված, եռանկյունաձև տեսք ունեցող գլխիկից փոքր-ինչ երկար են: Այս տարբերակները VII–VI դդ. բնորոշ և լայն տարածք ընդգրկող զինատեսակ են, որոնց սակավությունը Սյունիքում կարծես հաստատում է Ն. Ադոնցի կողմից ժամանակին արտահայտած այն կարծիքը, որ Ռուսան բանակցությունների միջոցով թույլ չի տվել սկյութներին ողողել Ուրարտուն, ինչն արել էին կիմմերները, այլ նրանց Մաննա է ուղղորդել*[32]*: Սյունիքից հայտնաբերված նետերի սակավությունը, թերևս, այդ է վկայում:*

Առաջանում են մի շարք հարցեր, որոնցից հիմնականը, որը կարող է նպաստել նաև Ուրարտուի հյուսիսարևելյան սահմանները կամ բոլոր դեպքերում՝ ազդեցության ոլորտում գտնվող տարածքները որոշ չափով հստակեցնելուն՝ Արցախի և Միլի (Ուտիքի) տափաստանում, սկյութական տարրի սփռվածությունն է:

---

[31] *Խոսելով Բեշտաշենից գտնված նման նետասլաքների մասին, Բ. Ա. Կուֆտինը կասկած է արտահայտում Ռաուի կողմից շրջանառության մեջ դրված «սկյութական» անվան վերաբերյալ, նշելով, որ հետազոտողները հաշվի առնելով սկյութներով բնակեցված տարածքներում նման սլաքների առատությունը, անտեսում են այն փաստը, որ նմանները Կարքեմիշում հայտնաբերված են քաղաքի պաշտպաններին պատկանող շերտում (մ. թ. ա. 604 թ.): Հելլենիզմի դարաշրջանում, սակայն, սկյութ էին անվանում ընդհանրապես քոչվորներին, իսկ ըստ Հերոդոտոսի, պարսիկները սկյութներին «սակեր» էին անվանում (*Г е р о д о т. *Նշվ. աշխ., էջ 333*). *նրանցից շատերը Սև ծովի հյուսիսային տարածքներից շատ հեռու էին բնակվում, ընդհուպ՝ Միջին Ասիա (օրինակ՝ Սամարղանդից հայտնաբերված նետասլաքները պատճենում են Սյունիքի օրինակներին. հմմտ.՝* Археология СССР, 1985, табл. CXXX, *ստորին երկու շարքում, էջ 418): Այդ ընդարձակ տարածքում չկա մեկ միասնական՝ «սկյութական» էթնիկ և քաղաքական միասնություն: Ընդունվում է Բ. Ա. Շրամկոյի այն ձևակերպումը, ըստ որի՝ «սկյութական» մշակույթը ձևավորվել է Արևելյան Եվրոպայի հարավում, կիմմերական դարաշրջանին նախորդող շրջանում, անտառատափաստանային գոտու բնակչության կարևոր դերակատարությամբ, որոնք առանձնացած չէին Եվրասիայի իրանալեզու այլ քոչվորներից: Ներկայումս «սկյութական» կոչված նետասլաքների տիպաբանական զարգացումն ու թվագրությունը բավական մանրակրկիտ են մշակված (մանրամասները տե՛ս* Археология СССР, т. X, с. 37, 40, 49, 92, 292–294, 369, табл. 27, 28, 34, 64)*: Հետազոտությունների արդյունքները ուսումնասիրողներին հանգեցրել են այն կարծիքին, որ տափաստանաբնակները Կովկաս են թափանցել տարբեր ճանապարհներով (ընդ որում՝ Դերբենդի անցքը մեծ դեր չի կատարել) ու ժամանակներում, որի ապացույցը վաղ և ուշ սկյութական նյութերն են (նույն տեղում, էջ 238–285:* С. А. Е с а я н, М. Н. П о г р е б о в а. Скифские памятники Закавказья. М., 1985, с. 75, 133).

[32] *Ն. Ա դ ո ն ց. Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 132–133, 290, 304:*

Առկա տվյալները, որոնք դեռևս բավարար չեն առաջադրված հարցերի վերջնական պատասխանը ստանալու համար, թույլ են տալիս սոսկ հարցին մերձենալ: Ներկայումս սկյութական նյութեր, սակավ տեսականիով, հայտնաբերված են Մարտակերտի շրջանի Ներքին-Հոռաթաղ, Միլի (Ուտիքի) տափաստանում՝ «Օրջոնիկիձեի» անվան ջրանցքի մոտ գտնվող «փոքր դամբարանից», Գետաբեկ-Կալաքենդի դամբարանադաշտի № 48 դամբարանից, Շամքորի և Մինգեչաուրի դամբարանադաշտի առանձին դամբարանաթմբերից[33]: Նշված հնավայրերից Ներքին-Հոռաթաղ գյուղի դամբարանը ցածր դամբարանաթմբով ծածկված քարարկղ է, որտեղ մեջքի պառկեցված և վերջույթները ձգած դիրքով երկու կմախք են եղել: Դրանց մոտ գտնվել են տեղական արտադրանքի չորս խեցանոթ, 26 սկյութական նետասլաք, բրոնզե փոքր իրեր՝ հիմնականում զարդեր: Այլ պատկեր է ներկայացնում «փոքր դամբարանաթումբը». 0,5 մ բարձրությամբ հողալիցքը ծածկել է հիմնահողային տեսակին պատկանող և ծածկասալերից զուրկ դամբարանախուցը, որտեղ կմախքը աջ կողքի վրա է պառկեցված եղել: Ուղեկցող նյութերը ներկայացված են տեղական մշակույթին պատկանող խեցանոթներով. թեթևակի կորացած թևիկներ ունեցող բրոնզե սանձով. անցքերով զարդարված վահանիկաձև իրերով, քառակող զանգակով, ձիու ճակատակալի մասով, երկաթե դանակի բեկորով և սկյութական եռաթև նետասլաքով: Այս դամբարանում ևս ակնհայտ է տարբեր մշակույթների պատկանող նյութերի համատեղ հանդես գալը. տեղականին զուգահեռ (կմախքի դիրքը, բոլոր խեցանոթները, երկաթե դանակը) առկա է նաև սկյութականը (սանձ և նետասլաք) և ուրարտականը (զանգակ, թերևս՝ ձիու դիմակալն ու վահանիկաձև իրեր): Տարբեր մշակույթների են պատկանում և Գետաբեկ-Կալաքենդի -48 դամբարանից հայտնաբերված նյութերը: Երկու սալով ծածկված այս քարարկղն ամբողջությամբ քարերով է լցված եղել, որոնց միջև գտնվել են կոտրտված խեցանոթներ. դրանք չեն տարբերվում Սյունիքից հայտնաբերվածներից: Խիստ վատ պահպանված կմախքի մոտ գտնվել են ապարանջաններ, կճումներ, սկյութական նետասլաք, «սևանյան» տեսակի բրոնզե դաշույն:

Երբ փորձում ենք իմաստավորել ու հիմնավորել հնագիտական նյութերի նման արդյունքերը գրավոր աղբյուրների տվյալներով, որոշ չափով անսպասելի են այն առումով, որ սկյութական նյութերի սպասված առատությունը Գետաբեկ-Կալաքենդի շրջանում, որը պետք է գտնվեր Ի. Մ. Դյակոնովի կողմից ենթադրվող Գանձակից Ուրմիա տարածվող «սկյութական թագավորության» սահմաններում, չի

---

[33] Ю. А. А с р я н. Нагорный Карабах в эпоху поздней бронзы и раннего железа (II–I тыс. до н. э.). Степанакерт, 1999, с. 23–24; А. А. И е с с е н. Из исторического прошлого Мильско-Карабахской степи.– Материалы и исследования по археологии СССР (*այսուհետև՝* МИА), № 125, 1965, с. 10–34, табл. 6-13; Г. М. А с л а н о в, Р. М. В а и д о в, Г. И. И о н е. Древний Мингечаур. Баку, 1959 с. 96-97; А. А. И в а н о в с к и й. *Նշվ. աշխ., էջ 120, աղ. III3, VIII35, 36, XIII 19-21:*

դիտվում[34]: Ավելին, Միլ-Արցախի տափաստանում գտնվող խոշոր դամբարանաթմբերը, որոնք ենթադրվել էր, թե կարող էին պատկանել իրենց անունը տարածքին թողած սկյութներին (Սակասենե / Շակաշեն), պեղումների արդյունքներով չի հաստատվում: Ա. Ա. Իեսսենը հավանական է համարում, որ այդ երևույթի պատճառը, երևի թե, պետք է փնտրել սկյութների՝ ընդգծված ռազմական բնույթ կրող շարժունակ կենսակերպի մեջ: Հետազոտողի կարծիքով՝ սկյութները կարող էին ձմեռել Միլի և Ղարաբաղի տափաստաններում, իսկ ամռանը գնալ Մեդիայի և Ասորեստանի կենտրոններին մոտ գտնվող մերձուրմյան շրջանները: Հետազոտողն ընդգծում է, որ տարածաշրջանում սկյութական արշավներին կամ անմիջապես դրանց հաջորդող ժամանակամիջոցում գոյություն են ունեցել նստակյաց բնակչության պատկանող մշտական բնույթի բնակավայրեր[35]: Դրանցից մեկի պեղումներից (Օրեն-Կալեի մոտ գտնվող Ղարա-Թեփեն) պարզվել է, որ այն եռաշերտ բնակավայր է, որի ստորին՝ VII–VI դդ. թվագրվող շերտի աղյուսաշեն կացարաններից հայտնաբերված խեցեղենը, հիմնականում սև, կոկած մակերեսով, գնդաձև իրանով, լայնահատակ և շրթին միացող աղեղնաձև կանթով անոթներ են: Դրանց զարդերը գլխավորապես հատվածքով արված գծիկներ են, կոճակաձև ելուստներ, կտրվածքով ստացված եռանկյունիներ, երբեմն՝ դրոշմաշրջաններ[36]: Այդ նյութերը Ա. Ա. Իեսսենը համադրում է «փոքր դամբարանաթմբի» գտածոների հետ, որոնք թվագրում է 650–600 թթ. վերջիններս կապվում են Սյունիքի նյութերին: Ուշագրավն այն է, որ առանձնացած բնակավայրերի խմբի տպավորություն թողնող այս հուշարձաններից հայտնաբերված նյութերի շարքում բացակայում են սկյութական կամ ուրարտական, կամ էլ վերջինիս ազդեցությունը կրող նյութեր, որոնք առկա էին Սյունիքում (ճիշտ է՝ ոչ շատ):

Չանտեսելով տարածաշրջանի անբավարար հետազոտված լինելու հանգամանքը, թերևս, սխալ կլիներ բացառել և այն ենթադրությունը, որ հնարավոր է այս հուշարձանախմբի երևան գալը պայմանավորված լինի Ռուսա Բ-ի գործունեությամբ, որը, հաշվի առնելով սկյութների Մաննայում հիմնավորվելու, նրանց՝ Ախշերի-Մամիտարշու-Կաշտարիտի դաշնությանը միանալու, նաև իր համար վտանգավոր հեռանկարները (նա արդեն իսկ կորցրել էր Արգիշտի Բ-ի ձեռք բերած մերձկասպյան տարածքները), երևի թե աշխատել է արևելյան սահմաններն ամրացնել այլ վայրերից բերված բնակչությամբ: Վերջիններս, եթե հաշվի առնենք խեցանոթների առանձնահատկությունները, բնորոշ գծերը և այլն, կարող էին նաև Սյունի-

[34] И. М. Дьяконов. История Мидии, с. 250–254.

[35] А. А. Иессен. *Նշվ. աշխ., էջ 22–32:*

[36] О. Ш. Исмизаде. Раскопки холма Кара-тепе в Мильской степи (1954–1958 гг.).– МИА, № 125, 1965, с. 197–212, рис. 11.

քից բերված լինել[37] կամ մերձակա տարածքներից: Ռուսայի կողմից իրագործվող կամ բոլոր դեպքերում նրա կողմից խրախուսվող վերաբնակեցումները, եթե հաշվի առնենք Միլի (Ուտիքի) տափաստանի նշանակությունը, ցանկացած պահի հրաշալի արոտավայրեր հանդիսացող այդ տարածքները թափանցելու պատրաստ շարժունակ սկյութների համար պատճառաբանված և արդարացված են երևում: Թվում է, որ հարցի հստակեցմանն է նպաստում Ստրաբոնի այն վկայությունը, որ Սակասեն / Շակաշենը իր անվամբ պարտական է սկյութներին[38]: Չծանրանալով մանրամասների վրա՝ նշենք միայն, որ հետազոտողների մի խումբը այս վկայությունը «սկյութական թագավորության» առկայությունը հաստատող փաստ է ընդունում: Մյուսները, կասկածամտորեն մոտենալով նման պնդմանը, մատնանշում են «Սակասենե» անվան առաջացման ժամանակի հստակ չլինելը[39]: Իսկ Ն. Ադոնցը, մերժելով այդ անվանումը, իբրև Հայաստանի ազգագրական քարտեզը փոխած խոշոր տեղաշարժի վկայություն հանդիսացող Ջ. Կրոլլի կարծիքը, նշում է Sakasene, Saka – Sayana՝ «սակերի բնակության վայր» իմաստն ունենալը և saka – սկյութացիներ իրանական անվանում լինելը: Հետազոտողը հնարավոր է համարում, որ սկյութների մի մասը, թերևս, կարող էր մնացած լինել Սակասենեում[40]:

Արտահայտված կարծիքների հակիրճ անդրադարձից իսկ նկատելի է, որ հետազոտողները «Սակասեն – Շակաշեն» անվան երևան գալը կապում են սկյութների VII դ. կատարած տեղաշարժերի հետ: Առկա հնագիտական նյութը, սակայն, եթե հաշվի առնենք, որ հելլենիզմի դարաշրջանում նույնիսկ «սկյութ» էին անվանում ընդհանրապես քոչվորներին[41], որոնց պարսիկները «սակեր» էին կոչում և որ

---

[37] *Այս տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Խոտ գյուղի բնակավայրը: Կիկլոպյան պարիսպներով շրջափակված այս բնակավայրի երկու կացարանում, պեղումների ընթացքում, անմիջապես հատակի վրա տարածվող շերտից հայտնաբերվեցին VII–VI դդ. թվագրվող խեցանոթների բեկորներ, նավակաձև աղորիքների մասեր և այլն: Տպավորությունն այնպիսին է, որ բնակիչները լքել են բնակավայրը իրենց հետ տանելով ողջ գույքը: Արծկեից հայտնաբերված արձանագրությունում, խոսելով Չիուկունի երկրում «Խալդի քաղաքի» կառուցման մասին, Ռուսան նշում է, թե թշնամական երկրներ Մուշկինիից, Խաթեից և Խալիտուից* կանանց *է բերել (*Н. В. А р у т ю н я н. Корпус…, с. 336)*: Այս և այլ փաստեր ցույց են տալիս, թե արքաները ինչպիսի մեծ նշանակություն էին տալիս բնակչության վերաբնակեցումներին. դրանք, պայմանավորված ժամանակաշրջանի բուռն իրադարձություններով, նվազում էին:*

[38] *Ս տ ր ա բ ո ն. Աշխարհագրություն Հայաստանի ու հայերի մասին, Երևան, 2011, էջ 40: Նույն տեղում նշվում է, որ տարածքը Հայաստանի ամենալավ գավառն է, և որ Կյուրոսն է կոտորել սակերին:*

[39] *Տե՛ս* Археология СССР, т. VIII, 1985, с. 13–93.

[40] *Ն. Ա դ ո ն ց. նշվ. աշխ., էջ 304:*

[41] Археология СССР, т. X, с. 40.

տափաստանաբնակներն Այսրկովկաս են թափանցել տարբեր ժամանակներում, ապա չի բացառվում, որ նրանց առաջին խմբերը կարող էին ավելի վաղ հայտնվել: Նման ենթադրության օգտին են խոսում հնագիտական հետազոտությունների արդյունքները: Մասնավորապես, Մ. Ն. Պոգրեբովան, հիմնվելով նշված տարածքի դամբարանադաշտերի պեղումներից ստացված արդյունքների վրա, գալիս է այն եզրակացության, որ պեղված դամբարանները ժամանակագրորեն երկու՝ պայմանականորեն «Գետաբեկյան» (IXդ. վերջ – VIII դ.) խմբին պատկանողներից հայտնաբերված ձիասարքի իրերը, այլ առանձնահատկություններ, ցույց են տալիս, որ VIII դ. վերջում որոշակի կապեր են եղել Կուրի աջափնյա տարածքների արևելյան ու հյուսիսային Կովկասի արևմտյան շրջանների միջև: Վերջիններս ակնհայտորեն հյուսիսկովկասյան ռազմիկների, նախասկյութական *շրջանի արշավների արդյունք են*[42]*: Կարելի է ենթադրել, որ հենց Շակաշենում (շագ–շակ և «շեն» – հուն. արտաբերմամբ՝ «սեն») տարածված պարզ, միօրինակ, սև մակերեսին խազմամբ ստացված երկրաչափական պատկերները սպիտակ նյութով ընդելուզված խեցեղենը, որն այլ վայրերում եզակի նմուշներով է երևում, կարող է այդ վաղ տեղաշարժերի հետ կապված լինել: Այս դեպքում որոշակի բացատրություն կարող է ստանալ Հերոդոտոսի այն վկայությունը, թե սկյութները այդտեղ հանդիպեցին և պարտության մատնեցին մեդացիներին (սա անախրոնիզմ է, թերևս, ճիշտ լինի՝ նախաուրարտական շրջանի տեղական առանձին ցեղերի մեջ ներսփռվել):*

Սույն հոդվածի շրջանակներից դուրս գտնվող այս հարցերն իրենց պատասխանը կստանան Սյունիք-արցախյան օջախի VII–Vդդ. պատկանող հուշարձանների պեղումների ընթացքում: Ելնելով առկա տվյալների ընձեռած հնարավորություններից՝ կարելի է ենթադրել, որ Արգիշտի Բ-ի օրոք անկախությունից մեծապես զրկված (Զագինու թագավորի հեռացումը, ավագանու դերի բարձրացումը) Սյունիքը, որին Ռուսա Բ-ն շարունակում էր տիրոջ աչքերով նայել (բանակցություններով հեռացնել սկյութներին), Սարդուր Գ-ի (եթե ոչ Ռուսայի գահակալության վերջում) տարիներին ստեղծված նոր իրավիճակում, կարողացել է լռելյայն իր անկախությունը ձեռք բերել: Թերևս, այդ նոր իրավիճակի վկայությունը հանդիսանան Միլի տափաստանի բնակավայրերի նյութերի տեղական, անխառն բնույթը. դա կարող էր պայմանավորված լինել և վերաբնակներին իբրև պատվար օգտագործելու նպատակով: Երկրի անվտանգության ուժեղացմանն էին ուղղված և Մակվի մոտ «Ռուսայի փոքր քաղաքի» կառուցումը, Էրեբունիի, Արգիշտիխինիլիի և այլն ամրությունների առկայությանը զուգահեռ Թեյշեբաինիի շինարարությունն ու Զվարթնոցի ջրանցքի անցկացումը: Այդ աշխատանքները խոսում են ոչ միայն տա-

[42] М. Н. П о г р е б о в а. Особенности конских захоронений и конского убора в памятниках VIII – первой половины VII в. до н. э. Правобережья Куры.– АЭФК, с. 208–210.

բածքն ամրացնելու, այլև Արարատյան դաշտը Ուրարտական տերության երկրորդ կենտրոնի (դեռևս) և շտեմարանի փոխարկելու նպատակների մասին:

СЮНИК ВО ВРЕМЯ УРАРТСКОГО ПЕРИОДА
(По археологическим данным)

ОНИК ХНКИКЯН

Резюме

Анализ имеющегося археологического материала показывает, что культура Сюника, подчиненного еще Сардури II (764–735 гг.), развивалась на основе местных традиций. Параллельно с этим во всем регионе наблюдается усиление как урартского, так и исходящего из северо-западных областей Ирана влияния. «Скифский» элемент в регионе представлен очень слабо, что вызывает сомнение в существовании «скифского царства» в области Гандзак – Урмия.

SYUNIK DURING THE URARTIAN EPOCH
(On archaeological data)

ONIK KHNKIKYAN

Summary

The investigation of the available archaeological data shows, that Syunik culture subdued to Sardur II (764–735), developed on the ground of local traditions. Parallel with itin all the region and North-Western Iran, the Urartian influence is noticeable. The “Scythian” element is weakly demonstrated and in this respect it makes suspicious the presence of the “Scythian reign” in Gandzak-Urmia region.